

Չոր. Հարգարտի կառավարները ցերեկ-
ւայ ժամը Պին ժառանգաւ կարգի երկա-
թուղիի կայարանին իւր յանձնարարեալ
թնդանօթիւնը 21 տեղած աւճակաւ
ողջսնի ժամանակ պարգւատրեալ ընդունեց
քաղաքացեալին յարեմայթաթիւնները և
պատուոյ պաշակաւարները խնդրեալ զա-
յիւր հիմնարկութիւնները և ապարմանաւ

Թեան ներկայացուցիչները, զոր. Հարպորտ
օթոմայիններով և ուղեկցութեամբ 300
ձիաւորներու զնայ զէպի հրամանատա-
րութեան շէնքը, ուր հիւրասիրութեամբ
հաչով: Համբաւն երկու կողմը կարգով
կանգնած էին զինուորները և ժողովուրդը,
բռնելով ամբողջ տարածութիւնը: Ժողո-
ւորդի աղմկայի ցոյցերու և զինուորներու
հուրաններու տարաբի տակ զօրավարի զը-
նացքը մօտեցաւ հրամանատարութեան
շէնքին, ուղեկցութեամբ բոլոր իշխանու-
թիւններու ներկայացուցիչներուն:

Երեւան, 29 սեպտ. — Ճիշդ ցերեկուան
ժամը 3ին Լեւոնիան օթոմայիններով
Երեւան ժամանեց Չոր. Հարպորտ: Չորս
վարին զիմաւորեցին վարչապետը, նախա-
րարական ամբողջ կողմը, Վրաստանի,
Ասորի, յանգի զիւստագիտական ներկա-
յացուցիչները, Ամերիկայի, Անգլիոյ, Ֆը-
րանսացի զինուորական աստօթութիւննե-
րու ներկայացուցիչները: Գիմաւորութիւն
ներկայ էին նաեւ քաղաքապետը, քա-
ղաքապետի, բարձր զինուորական իշխա-
նութիւնները, Երեւան քաղաքի հայ և թա-
թար ազգաբնակչութեան ներկայացուցիչ-
ները:

Գեռ չհասած յաղթական կամարը, որ
պատարաստուած էր Զանկուի կամուրջին
այն կողմը, Չոր. Հարպորտի օթոմայինը
կանգ առաւ և առ վար իջաւ: Զօրավա-
րին ընդունողն ամերիկեան զինուորական
աստօթութեան ներկայացուցիչը, որ կարճ
ճամբով ողջունեց զօրավարին: Յետոյ ա-
նոնք միասին յառաջացան կամարը: Անոնց
ընդառաջ գնաց Հայաստանի վարչապետ
Պ. Խաչատրեան, որ ողջունելով անոր գա-
լուստը, արտայայտեց շնորհակալական ըզ-
գացմունքներ զէպի Ամերիկայի, Հայ ժո-
ղովուրդին ցոյց տուած օգնութեան համար,
և իմացնելով կառավարութեան պատ-
րաստակամութիւնը՝ օգնութեան գալու-
ստը առաքելութեան գործը իրականաց-
նելու համար, ցանկութիւն յայտնեց
ունենալ ազատ, միացեալ Հայաստան:
Ամերիկայի հոգատարութեան տակ:

Պատասխան ձայնի մէջ Չոր. Հարպորտ
շնորհակալութիւն յայտնեց Հայաստանին,
իրեն ցոյց տրուած ընդունելութեան հա-
մար. ըսաւ որ Ամերիկա կը հետաքրքրուի
Հայաստանով և անոր վիճակով. որպէս
ապացոյց՝ իր գալուստը Հայաստան: Ինք
եկած է ոչ թէ բաւականութեան, այլ իր
վրայ դրած պարտականութիւնները կա-
տարելու համար. իր աստօթութեան բոլոր
անդամները ունին իրենց պարտականու-
թիւնները, և իրենցով իւրաքանչիւրը պի-
տի աշխատի իր սահմանին մէջ. ինքն ալ
երկու օրուայ ընթացքին, որ պիտի մնայ
հոս, նախարարները իրենց գործերէն վար
պիտի դնէ, օրպէսզի հարկ եղած տեղե-
կութիւնները անոնց անոնց մէջ:

Ճանաչելն յետոյ Հայաստանի վարչա-
պետը ներկայացուց Չոր. Հարպորտին ներ-
կայ եղող անձերը. ապա նստելով օթոմա-
յինները, մեկնեցան քաղաք, Երեւան:

Քաղաքը զարգարուած էր ամերիկեան
ու հայկական դրօշակներով, գործերով և
կանաչով: Զանկուի կամուրջէն սկսեալ
հասարակութիւնը բռնած էր ամբողջ ճա-
նապարհը: Աստօթեան փողոցի երկու կող-
մերը կանգնած էին զինուորական շարքերն
ու որբերը: Անոնց կ'երթային քաղաքա-
պետը, չորս ձիաւորներ ազգային տարա-
գով, բռնած ամերիկեան և հայկական դը-
րօշակներ. անոնց կը հետեւին Չոր. Հար-
պորտի, վարչապետի օթոմայինները՝ ու-
ղեկցութեամբ կէս ջուրու զօրախումբի մը.
Հարպորտի օթոմայինը երեւորուն պէս,
թնդային որբերու և բազմազգաւոր հասա-
րակութեան փեցցէտները, որոնք կանգ-
նած էին փողոցի երկու կողմերը: Զօրա-
վարին համար պատրաստուած բնակարա-
նին մօտ, երաժշտական նուագախումբը
նուագեց հայկական մարջը, որմէ յետոյ

Հարպորտ ընդունեց զինուորական շա-
խմար, շնորհակալութիւն յայտնեց իրեն
ցոյց տրուած պատիւին համար, արտա-
յայտեց իր գոհունակութիւնը կարգապա-
հութեան և մաքրութեան համար, որ տե-
սած է հայկական զօրքին մէջ, և ապա մօ-
տեցաւ ու դիտեց շարքով կանգնած որ-
բերը:

Երեւան, 30 սեպտ. — Այսօր ժամը
10 և կէսին Չոր. արպորտ այցելեց Հա-
յաստանի վարչապետին, կառավարու-
թեան շէնքին մէջ:

Չոր. Հարպորտի աստօթութեան եր-
կու անդամները Նախիջևան մեկնեցան:
Աստօթութեան մէկ ուրիշ անդամ զնդա-
պետ Պրիթօնը արդէն սկսաւ ծանօթանալ
կառավարութեան գործերուն:

Երեւան, 2 հոկտ. Այսօր Չոր. Հար-
պորտ իր պատուիրակութեան հետ, ու-
ղեկցութեամբ Ներքին գործոց նախարարի
օգնական Մանասեանի և քաղաքապետ
Մուսիսեանի, մեկնեցաւ Գիւրիշան, Ղա-
րաքի խաւ և ապա Թիֆլիս:

ԶՕՐԱՎԱՐ ՀԱՐՊՈՐՏ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Զօրավար. Հարպորտ հոկտ. 2ին ժա-
մանց Թիֆլիս, իր հետեւորդներով: Որ
թաճալայի ճամբուն վրայ գայն ողջունեց
Վրաց հեծելազօրքը: Զայն զիմաւորեցին
օտար զինուորական պատուիրակութիւննե-
րը, Վրաց կառավարութեան և քաղաքա-
պետական ներկայացուցիչները: Քաղաքը
զարգարուած էր դրօշակներով: Օրթաճալայէն
մինչև Հասթիի բնակարանը տանող ճաճ-
բուն վրայ կանգնած էին ոստիկան զօր-
քերը, կարգը պահպանելու համար: Տեղ
տեղ կը նստէին զինուորական ֆանֆարը:
Գնդ. Հասթիի տան ձաւ, Չոր. Հարպորտ
տի բարի գալուստ մողթեց Վրաց կառա-
վարութեան ներկայացուցիչ Գ. Ղամպա-
շիճէ: Վրաց պատուոյ պահակախումբէն
մաս մը բարեկիցեցած էր հոն:

Հոկտ. 3ին Չոր. Հարպորտ, գնդ. Հաս-
թիի հետ և ընկերակցութեամբ իր հետե-
ւորդներուն, այցելեց Վրաստանի փոխ-
վարչապետ Ալեկէքսորի, ուր ծանօթացաւ
կառավարութեան միւս անդամներուն հետ:
Զօրավարը պարտէ մը ետք զարձաւ
գնդ. Հասթիի բնակարանը ուր իջեանաւ
էր:

Չոր. Հարպորտ մասնաւոր կառախում-
բով գացած է նաև Աւերպէճեանի մայրա-
քաղաք Պապու և վերադառնալով գնդ.
Հասթիի հետ մեկնած է Թիֆլիսէն Պա-
թում, ուրիշ Պաթում ժամանեց:

ԲԵՐԻՍՏՈՆԵՍՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Կ. պօլսէն գրած են Փարիզի «Գաւառ»-ին.
Քրիստոնեայիցիների և եկեղեցական
պետերը Յոյների, լուսաւորչական
և կաթոլիկ Հայերի պատրիարքները
և բողոքականների ազգապետը՝ խա-
ղապետութեան խորհրդաժողովին հե-
ռազրով դիմում ընելէ յետոյ, տէ-
րութիւնների Կ. պօլսի բարձր գո-
միտէրներին դիմելով անոնց յանձնե-
ցին խորհրդաժողովին իրենց զրկած
հեռազրի պատճէնը որ կը ներկա-
յացնէր քրիստոնեայիցիների տաճնա-
պալի կացութիւնը այն նահանգների
մէջ որոնք գրաւուած չեն դաշնակից
զօրքերէ: Հոգևոր պետերը յայտա-
բարեցին որ եթէ Համաձայնութիւնը
մերժէ միջամտել իրենց ցաւ ի սիրտ
պիտի հարկադրուին հրաժարել ի-

րենց պաշտօնէ և քրիստոնեայիցիների
բողոքը յանձնել խորհրդաժողովին
ձեռքը: Յայտնեցին նաև որ գաւառ-
ներէն իրենց հասած տեղեկութիւն.
ներէն համազուած են որ թիւրքա-
կան ազգային շարժումը մեծ ոյժ մը
չներկայացներ:

Այս առթով, Յոյների պատրիարքը մեր
թղթակիցներէ մէկին հետեւալ յայտարա-
րութիւններն ըրած է.

Դէպքերը մեզ ստիպեցին այս գի-
մումը ընելու բարձր գօմիտէրներին:
Արգարի, մեր ազգայիներների տառա-
պանքները զինազարդարէն ի վեր չեն
պակսիր: Թիւրքերը գիւղերի կամ
նշանաւոր աւանների շուրջ այնպիսի
անապահովութեան միջոցաւ մը
ստեղծած են որ անկարելի կը գաւ-
նան օնէ յարարերութիւն, օնէ շար-
ժում և առուտուր և բնակիչները կը
ստիպուին վերջապէս լքել իրենց օ-
ճախները: Եստ անգամ նոյն իսկ
տեղական իշխանութիւններն են որ
կը յարձակին աշխատող հանգարա-
քիստոնեայիների վրայ: Անցած շա-
բաթ Չաթալճախի մէջ, Կ. պօլսէն
երկու ժամ հեռուն, թիւրք զինայր-
ներ (ժանտարմ) հրացան պարպած
են իրենց արտեր մշակող Յոյների
վրայ:

Վարչական պաշտօնների վրայ կը
գտնուին միշտ երիտասարդ թիւր-
քերը: Այս կացութեան առջև, քրիս-
տոնեայ ժողովուրդը որի պատիւն ու
ստացուածքը վտանգի ենթարկուած
են միշտ, կը փորձուի մտածել թէ
ալ ժամը եկած է իր սեփական մի-
ջոյններով ինքզինք պաշտպանելու:
Մենք միշտ հանդարտութիւն քա-
րուած ենք. բայց չեմ ծածկեր ձեզ-
նէ որ եթէ այս կացութիւնը շարու-
նակուի, մեզի դժուարին պիտի լինի
զսպել իրենց արգար զայրուիլը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՄԷ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Լոնտոնէն կը գրեն մեզ հոկտ.
29ին.

Այսօր «Գոլին» և «Օլ» սրահին մէջ Հայ-
կական Պիւրի կազմակերպութեամբ
ներկայացուցաւ այս մեծ ֆիլմը որ Ա-
մերիկայի մէջ կազմուած ու ցոյց տըր-
ւած է որ կը ներկայացնէ Հայոց վերջին
ջարդերն ու տեղափոխութիւնները: Այս
ներկայացումը մասնաւորապէս հրաւիր-
ւած անգլիացի ընտրեալ հասարակու-
թեան համար էր:

Ներկայացումէն առաջ հաշ տրուեցաւ
ժամը 1ին մամուլի ներկայացուցչու-
նուն եւ քանի մը կարեւոր անձանց,
Թուով մօտ 50 հոգի: Հաշին ներկայ
էր եւ Լորտ Պրայտ. կը նախագահէր Լորտ
Կլաւտոն, որոնք երկուքն ալ հաւեր
խօսեցան: Հաւերը տրուեցան այս երե-
կոյ տեղափոխութիւններուն մեծ մասին մէջ
եւ վարը կը տարին այն մեծ օրամեր-
թերուն մէջ որոնք առաւօտները լոյս կը
տեսնեն: Ֆիլմը շատ յուզիչ է եւ Թուով
ազդեցութիւնը անկասկած:

Այսուհետեւ նոյն ֆիլմը քաղաքիս գա-
նազան սինեմատիոն մէջ պիտի ներ-
կայացուի հասարակութեան:

ՄԱՀԱՅՈՅԺ ԵՒՐՈՊԱԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Խորին ցաւով կիմանանք որ Եւ-
րոպայի առաջնորդ Տ. Գեորգ ար-
քեպ. ի թիւհեան, միամեայ տառա-
պալից հիւանդութենէ յետոյ, հոկտ.
31ի ուրբաթ օր վախճանեց է: Լոն-
տոնի և Փարիզի հովիւները գնա-
ցած են Մանչեսթըր թաղման հան-
դէսը կատարելու:

ԱՐԻՆՈՏ ՃԱՄԲՈՒՆ ՄԷՋ

(Դար. 12րդ. Թուէն)

Եստ չապասեցինք այս անիծեալ
վայրը և ուղղեցանք աւելի հեռուն.
մազլիցիւով ժայռերը խիտ անտառ.
ներու մէջէ, ճամբաներ, ուրիշ ալ.
ձերն անգամ վախկոտ քաղերով կը
յառաջանան ու հոս հոս կը փախչին
նորէն:

Բայց վերջապէս ճակատագրական
պայքարն էր, հայկական ոգին էր
որ կը մղէր կոխտեղու աւելի խո-
չընդոտ և ծովածաւալ տառապանք:
Չիւնապատ լեռներու տխուր տե-
սարան մը այս անգամ. բայց ո՞ր
պիտի հանինք առկէ վերջ կը հար-
ցընեն կիները:

— Քիտիթալ, կը պատասխանէ
ժանտարման, մատր ուղղելով ճեր-
մակներով պնտուած հեռաւոր գա-
ղաթներուն:

— Ո՞ր կը գտնուի Քիտիթալ.
իրաւ որ ես այս տեսակ անունով
քաղաք մը չեմ իշխեր, կըսէ ուղեկից
ընկերոս:

Եւրոպայի գետը մօտեցանք, կը պա-
տասխանեմ. Մեր խօսակցութիւնը
կընդհատուի երբ կը տեսնենք հե-
ռուէն գէպի մեր կողմը եկող ճեր-
մակ զլխարկով ձիաւոր մը, իր ետե-
ւէն ուրիշ երկու ձիաւոր զինուած
ժանտարմաններով: Անոնք ալ կը հե-
տաքքրուինք. այս մարդը որ եկած
հասած էր մեզի հետ ի հետ, մեծ հե-
տաքքրութեամբ մը կսկսի հարցա-
քննել, կուզէ տեղեկանալ այն բոլոր
ոճիրներու մասին որոնք պատահեց
էին մեր ճամբորդութեան միջոցին.
աւելի ճիշդ՝ ինչ որ ըրեր էին թուր-
քերը մեզի:

Ճիւրմակ զլխարկաւորը, եղբու-
թիւններու մասին բաւական տեղե-
կութիւններ տեսնելէ վերջ, ափով
գրամ նետեց կիներուն ու անցաւ
գնաց զէպի Մալաթիա այն ճամբով
ուրիշ եկեր էինք մեզ:

Այդ մարդը (1) Ամերիկացի մի-
սիօնար մըն էր որ եկած էր իր
ձեռքէն եկած չափով օգնելու և իր
հոգիէն գուրո ցայտող բարեացակամ
զղացումներով անաքիւր և միտիթա-
րեւու թշուառութեան մէջ խեղդուած
այս խումբ մը հայերը:

(1) Անոնք, զժողովարար չկրցնէր հաս-
կանալ:

Գիշերը ուշ տառն կը հասնինք քեան թիւի ու կը գիշերենք ժամ մը հեռաւորութեամբ, զէպի Եփրատ վազող գետակի կամուրջին քով, Լոյսը հազիւ թէ ծագած է, կոտորակներ քարերէն կանցնինք Ստեփանանի մօտէն ու կը հասնինք Եփրատ գետը ուր չորս օր կապանք շարունակ:

Եփրատ գետը հասնենուն երկրորդ օրը քառասուն ժանտարմաներ կը մանեն մեր խումբին մէջ և գեղանի կիներն ու ազգիկները բռնի կը քաշքեն կը տանին: Երբ կիներու խումբը գիշեր փերջացուցին, այլերն ալ հաւաքեցին:

Այս միջոցին ես յանկարծակի բռնուեցայ ժանտարմանէ մը և խումբ մը երկատար-ղնեք ուղղուեցանք լեռն ուր արդէն կապանէին մեր բազմակից ընկերները:

Պիտի սպաննուիք, կըսէր ժանտարման, սուրը ցուցնելով մեզի:

Մօրութեամբ պիտաւոր մարդիկ սկսան աղաւթ մը պէս բարձրաձայն լալ: Անոնք որ 10 սակի ունէին ու կրնային տալ ժանտարմաներուն, կարձակուէին:

Անոնք մասը չկրցաւ տալ այս գումարը և իրենց պէս ալ այնտեղ սպաննուեցին: Այն մարդ աղքատ էր ու չէր կրնար օգնել իր տարաբազմ ընկերներուն:

Երրորդ օրը անցանք գետին միւս ափը. հաւ հաւաքեցին քուր հիւանդները և քաղցու անկարողները, յիսուս թափեցին Եփրատ գետը. իր զարով աղաւթուելու ջանք ընողներուն ետէն կը հաւանք կապարը:

Հինգերորդ օրը կը քշեն մեզ: Այս անգամ մտածեցի որ պէտք էր կանաչի դիմազիմ մը ստանայի որովհետեւ կը վախճայի որ մի' գուցէ նորէն սլորերը հատաքէին ու այս գերջինին մէջ զոհուէի: Ուստի զը տալ պատու կնոջ մը հանգերձները, հազուեցայ և այս անգամ առի շատ ցնգած պատուի մը թիփը:

Եփրատէն փերջ երկրորդ գիշերը մնացինք գաշտի մը մէջ: Ժանտարմաները նորէն սկսան հաւաքել ալ բերք. յետոյ կիներուն զէմքն ալ մէկիկ մէկիկ նայեցան այն յոյսով որ թերեւս սոսա կիներ ալ գտնուէին մեր մէջ: Ժանտարման մը ապուշի պէս եկաւ տալիս կեցաւ աչքերը սեւեռած ինձի. բայց չկրցաւ հասկը նայ, կորսուեցաւ գնաց:

Սակայն ծարաւ էինք. ժանտարմաները ջուր չէին տար մեզի, հաւաքած անոնք որ մօտերնիս պաղ և յատակ ջուր մը կը վազէր, անոնք իրենց էջերուն, ձիերուն կը խմէին: Իսկ մեզի պատիկ մ'անգամ չէին տար. արդիւրած էր հայուն ջուր խմելն ալ: «Մենք ձեզ մեռցնելու համար հանցիք քաղաքէն կըսէին. զոք հանգստութիւն կը փնտռէք. հոյին մէջ է ձեր հանգիստը»:

Ասկէ փերջ խումբին կէսը քաղցէ ու ծարաւէ ինկաւ մեռաւ. քիւրա կրնար ջուր կը ծախէին երբեմն,

հասարակ մէկ գաւաթը քսան զուրուշ արծաթ զրամի: Որո՞ւ քով զրամ մնացեր էր որ ջուր գնէր. չէ՞ որ կողպատուեր էին, չէ՞ որ ոտքերնին բոպիկ տատակներու, սրածայր քարերու վրայ կը կոխէին կանցնէին եթէ ունենային, շատ սիրով պիտի տային այդ քսան գահեկաննոց արծաթը գաւաթ մը ջուրի համար:

Կանցնինք Եփրատէն երկու օր հեռաւորութիւն ունեցող ճամբայէ մը ու կը հասնինք Սուրուճ կոչուած գիւղաքաղաքը: Այս այն ժամանակն է որ Եփրատի ապստամբութեան զրօշը քաշած կը պատերազմէր գետ մանական և թրքական բանակներուն դէմ:

Լիօն (Շարունակելի)
Թորոս ՏԻՎԱՆԵԱՆ

ԱՆՅՈՒԴԱՐՁ ՄԱՐՏԵՍԻԷՆ

Սարնիկի Ազգային Միութեան ատենապետ Տ. Տոգդէօր Գալուստ Սարնիկան որ փարիզ գնացած էր իր վաղամեծիկ եղբորորդիի՝ բժշկութեան ուսանող Տ. Նշան Ասլանեանի մահի անկողին մօտ գտնուելու համար, եւ միանգամայն մասնակցած էր վիրաբոյժների համաժողովին, Մարտի 11-ը գալով ասկէ մեկնեցաւ անցած ուրբաթ ցերեկին (հոկտ. 31) յունական շոգենավով մը դէպի Բիրէ ուրիշ շոգենավով կերթայ իր բնակավայրը Սարնիկ:

ՄԵԾԱԳՈՅՆ ԿԱՐԻՔԸ ՄԱՐՏԵՍԻԷՆ ԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Մեծն Հայաստանի ազատագրման վարդապետին ենք, պատմական ամենաբարձր ու եղական օրերու մէջ, ինչպէս ամէն հայ անհատ, եւ առաւել իւրաքանչիւր հայ գաղութ պարտի բովանդակ իր օժանդակութիւնը ի սպաս բերել ազգային սուրբ նպատակի իրականացման:

Մարտի 11-ը հայ գաղութն ալ հայ ազգութեան յաւիտենական ծառի ճիւղերէն մին ինկելով — գուցէ ոչ ամենազաւարճալիս — կրնայ տիպարներէն մին դառնայ, եթէ ջանար:

Մարտի 11-ը է հայութեան համար անցագրաւ գլխաւոր կայան մը. բայց չունի տակաւին հաւաքութիւն և ընդունելութեան համար ազգային յարկ մը, (ի բաց առեալ ամիսներէ ի վեր փակուած անշուք մատուց մը): Այս մեծ նաւահանգիստէն է որ կանցնին մեր երկու Պատուիրակութեանց պետերը, հայ համագումարի անդամները, ինչպէս նաեւ կ.պօլսոյ, կովկասի, Եփրատի, Ֆրանսիայի, Անգլիայի հայ վաճառականներն ու ազգայինները և Ամերիկայի մեծ հայ գաղութը:

Մարտի 11-ը հայ Ազգ. Միութիւնը իր գրադարմաներուն օր ըստ օրէ բազմապատիւ հետեւանօք սրտեց վարձել Միութեան համար գրադարմանէ մը և թուականը հայ գրադիր մը, իր նիւթակաշի թուրաբաժ անձնակ միջոցներով: Արդեօք աւելի ազգօ

գուտ և աւելի արդիւնաբեր չի պիտի ըլլար, եթէ Մարտի 11-ի բոլան զակ հայ գաղութի աջակցութեամբ աւելի կարեւոր վայր մը վարձուելով գաղութն ունենար իր Ազգ. Միութեան գրադարմանի հետ միասին վաճառել յարան ընթերցարան մը, այնքան անհրաժեշտ: Ու բնականաբար այդ բոլորի հոգատարութեան և տաք ու զովացուցիչ բազմակիցութեան համար օժանդակ պաշտօնեայ մըն ալ:

Այսպիսի միացեալ Ազգային կեդրոնատեղիի մը գոյութիւնը մեծ օգտակարութիւն պիտի ունենայ մանաւանդ Մարտի 11-էն անցնող և հայ բնիք վերադարձող Ամերիկայի Հայերուն: Այս վերջին օրերու տեսանք տանեակներով արդէն անոնցմէ հասած քաղաքս, ու մօտ ժամանակէն հարկւրներով և թերեւ նոյնիսկ հազարներով հասնին: Անոնք անձնօթ և անանդեակ քաղաքին ու հայ գաղութին՝ կը դեգերին յուրօրէն ամբողջ օրեր, սպասելով շոգենավի մը մեկնումին դէպի հայրենի նաւահանգիստները, և իրենցմէ ոմանք իսկ կը ծախսեն իրենց գրադարման անբարոյութեան լոյն դարձած սրճաբաններու մէջ:

Գուցէ Ազգային կեդրոնավայրի մը գոյութեան պահպանումի՝ ծախքերը մի քիչ ծանր թուին Մարտի 11-ի փոքրածիւ հայ գաղութին, սակայն մի քիչ զոհաբերութեամբ, անձնուրիշութեամբ և համբաւելութեան ոգով ի սէր ազգային պատուարժանութեան, կարծաւածէն աւելի հեշտ պիտի լինի իրականացումը: Թերեւս առարկուի ալ թէ մեծաւայելութեամբ ծախսէ ենք հասեր. բայց ըստ հին առածին՝ «այս է ուշքան ոչ հրէքս»:

Եկամուտներ կարելի է գոյացնել ուղղակի և մանուշաք անուղղակի հասոյթներով:

Ա) Ուղղակի հասոյթ կը գոյացուի գաղութիս ի վիճակի եղող հայ անհատներու անգամաւորութեան կանոնաւոր վճարումներէն: Օրինակ՝ մօտաւորապէս ունենալով՝

20 Պատույ անգամներ գրէթէ 100 ֆրանք մօից տուրքով և 15 ֆր. ամսավճարով:

50 անգամներ 30 ֆր. մօից տուրքով և 5 ֆր. ամսավճարով կընէ տարին ընդհանուր մօից տուրք 3.500 ֆր. և տարեկան գումար ամսավճարներու 6.600 ֆր.

Բ) Անուղղակի հասոյթ. շատ իրաւամբ կարելի է նկատել զայս աւելի արդիւնաբեր, հետեւեալ մի քանի միջոցներով՝

1) Բարեբար անգամներէ ալ, ուրնք կը վճարեն մի անգամ ընդ միջոց բայց միանգամ, անուշաք 500 ֆրանքս:

(Օրինակելի պիտի ըլլար ցուցադրել ամէն կարգի անգամներու անհատացեալները Ազգային Սրահին մէջ):

2) Այն հայ անհատ որ կը դիմէ Ազգ. Միութեան իր անձնակաշ թղթերու կանոնաւորման համար,

պարտի վճարել, եթէ ի վիճակի է, սահմանեալ փոքրիկ տուրք մը:

3) Ճամբորդութեամբ Մարտի 11-էն անցնող բոլոր հայեր այցելելով գաղութիս Ազգային կեդրոնատեղին, պիտի օգտուին լսարան ընթերցարանէն և Ազգ. Միութեան գրասենեկի իրենց տուած տեղեկութիւններէն, խորհուրդներէն և զանազան յանձնարարութիւններէն, և նոյն իսկ հարկ եղած պարագային՝ զիրենք ազատելով հայ և օտար խաչագոյներու ձեռքէն: Այս բոլոր մասնուցում ծառայութեանց հանգէպ, եթէ ամէն ճամբորդ հայ ազգասիրաբար իր գրադարման փոքրիկ նուէրը հաճի ձգել սրահին մէկ անկիւնը յատկապէս գումար զանձաւ տուփին մէջ, կամ 5 ֆրանքէ աւելի նուէրի գումար մը յանձնէ պաշտօնեային՝ փոխան ստացադրի, ահա հասոյթի յորդ ազգիւր մըն ալ, երբ նկատի առնենք մանաւանդ որ հարկէր հազարէ աւելի Ամերիկայի Հայերէն տարին լոկ հինգ հազար անցնի Մարտի 11-էն ու յաճախելով կեդրոնատեղին, նուիրէ միջին հաշուով 1 տուրք, կրնէ տարին 5.000 տուրք (կամ 30.000 ֆր. մօտաւորապէս):

4) Կեդրոնատեղիին ընթերցարանը յաճախողները կարգաւոր համար հայ և օտար թերթերու և գրքեր, պիտի փոփաքին միևնոյն ժամանակ իմել ձեռք տաք թէյ կամ տաճկական սուրճ, ու ամառը զովաւ ցուցիչ բազմակիցութեան և ալիւ, վճարելով նուազ գին քան դուրսը և իմելով աւելի լաւ տեսակէ, Այս ալ անշուշտ կը ձգէ փոքր շահ մը տարւոյն վերջը:

5) Կարելի է գոյացնել հասոյթներ նմանապէս թատերական ներկայացումներէ, պարահանդէսներէ, ինչպէս նաեւ նուիրեալ արժէքաւոր իրեղէններու վիճակահանութեան զբաղել:

Գաղութային կեդրոնավայր մը ունենալով կարելի պիտի ըլլայ այնուհետեւ հան հիւրասիրել անցորդ կարեւոր հայ անձնաւորութիւնները, փոխանակ օտար սուղ թէյարարհետէրու մէջ. հայ թատերասիրաց և երաժշտասիրաց խումբերը պիտի կարենան ձրիաբար հան կատարել իրենց փորձերը. հնարաւոր պիտի ըլլայ ստեղծել ընտանեկան, առողջապահական և այլ գաւաթութիւններ, օգտուելով այս մասին երբեմն հայ հրապարակախօսներու և մասնագէտներու Մարտի 11-էն ներկա յոյժներէն, սարքել ֆրանսերէն և անգլիերէն լեզուաց գաւաթանդութիւններ և այլն, գաղութին մէջ արծարծելով ազգային ոգեւորութիւն:

Կեդրոնատեղիին տնօրէնութիւնը կազմուելու է քաղաքիս ձեռնհաս և գործունեալ ազգայիններու յանձնախումբէ մը, Ազգ. Միութեան իրաւասութեան տակ, հրատարակել տալով կանոնաւորապէս իր վեցամեակ հաշիւաւորները, աւելեալագրութիւններն ու յայտարարութիւնները քաղաքիս Արմէնիային մէջ, իսկ տարւոյն վերջը, հասոյթներէն գոյացած գրա-

մի աւելին յատկացնել Ազգ. Միութեան շարժական նպաստից բաշխման գանձումն՝ հայ կարօտեալներու և զինուորականներու համար:

Բայց միակ դժուարին կէտն այս է, ներկայիս, ինչպէս բոլոր մեծ քաղաքներու մէջ, նմանապէս Մարտէլի մէջ ընակարաններու վարձքի գինը ընդհանրապէս բարձր է, ու բացի ազգէ՝ որոշ մեծ գումար մը եւ կը պահանջեն իբր ռուէր (prime վարձու տըւողները, կահաւորման և այլ իրեր ղէններու գիններն ալ շատ են բարձրացեր:

Դժբաղդաբար սղութեան այս միջոցներուն, Ազգային յարկի մը գումարեան կարիքն ալ Մարտէլի մէջ ամէն առեւտրական զգալի է գարձեր, 15էն 20.000 ֆրանք գումարի մը պէտքը կայ այս ազգագումար հաստատութեան հիմնադրութեան համար: Միթէ՞ վհատելու և ընկրկելու է. ո՛չ երբէք:

Հայ դպրութիւնը թէև ստուար թիւ մը չի կազմեր Մարտէլի մէջ, բայց ունի մի քանի հարուստներ, և նոյն իսկ 2 կամ 3 միլիոնաւորներ... Ո՞վ պիտի լինի ուրեմն այն հայ «մեկե նասը» որ ունի զոհոյթութիւնն յանձն առնելով՝ իր ազգասիրական վեհ ոգին վսեմ ապացոյցը մեզ ցոյց տալ:

Ու պիտի առաջարկէի անկեղծօրէն՝ իրականացման պարագային, Ազգային կեդրոնատեղւոյն սրահին մէջ՝ ոսկեգօծ չորանակի մը մէջ ցուցադրել յիշատակի մը ձօնեալ առհիմնադիր նուիրատու բարերարն (կամ բարերարներն) վասն անմոռաց երախտագիտութեան:

Մայիսի 26 և յուսանք...

Մարտէլ

26 հոկտ. 1919

Հայկ. Պ. ՃԵՐՐԱՆԵԱՆ

ՊՈԼԿԱՐԱՅԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Գերագոյն խորհուրդը նոյեմբեր 3ին իր պատասխանագիր զրկեց պոլկար պատուիրակութեան զիտուողութիւններին, 10 օր պայմանաժամ տալով՝ իմացնելու համար թէ պոլկար կառավարութիւնը վերջնականապէս պիտի ընդունի՞ զաշխարհը իր նոր ներկայացուած վիճակի մէջ թէ ոչ:

Կարգը հկած է այժմ թիւրքիսին և Ռուսիան:

ԹԻԻՐԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ծովային նախարար Սալիհ փաշա որ կառավարութեան կողմէն իբրեւ պատուիրակ գնացած էր բանակցիլ ազգային (միլի) շարժման պետ Բէժալ փաշայի հետ, այս վերջինի հետ տեսակցեց Սալիհի մէջ ուրկէ հեռագրեր է կ'աւօրիս թէ հոկտ. 9ի քննհանուր համաձայնութեան մասն:

Բամանու թիւններին վրայ ալ հետըզհետէ համաձայնութիւն կը գոյանայ:

Մուսթաֆա Բէժալ ընդունեց է կատարելապէս ազատ թողուլ նահանգապետները իրենց պաշտօնաւարութեան մէջ և յիտաձգել նախորդ կառավարութիւնը պատասխանատուութեան ենթարկելու իւրն զիրը: Այսպիսի բանակցութիւններին համար Ազգային շարժման կողմէն պատուիրակներն են Մուսթաֆա Բէժալ, Նախկին վալի Սամի պէյ, Ծովային նախկին նախարար Բէժալ պէյ և Նախկին գնդապետ վասթապէյ որ ազգայնական կազմակերպութեան ներկայացուցիչը պիտի լինի Կ.պոլսի մէջ:

— Կ.պոլսէն Լոնտոնի «Դայմըզ»-ին տրուած հեռագրիւններին նայելով, զրոյց կը չըլլի թէ այն երկու թիւրք ճանապարհորդներ սրտք վերջերս Բաքու իջած սաւառնակին մէջ ձերբակալուած են երեք Գերմանացիներին հետ մէկտեղ, Թալէաթ և Ճէմալ փաշա. ներս են եղեր Կըստի թէ ատենք վախճալով որ Գերմանիան զիրենք կը յանձնէ համաձայնութեան տեսութիւններին, որոշեց են երթալ միանալ Էնվեր փաշայի հետ Թիւրքաստանի կամ Անգլոփոնի մէջ, պոլսէն Սուսիսի վրայէն անցնելով:

ԽՈՌՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Նորէն Եգիպտացիները խռովութիւններ հանած են ամբողջ Եգիպտոսի մէջ:

Արեւմտեգրիսի մէջ հոկտ. 29ին տեղացի Արաբներէ կազմուած ամբողջ Եգիպտացիներ թաղը իւրեւթելով յարձակեցին իրանութիւններին վրայ, կողոպտեցին մէկ ժամ տներ է. փողոցներէն անցնող անգլիացի զօրքեր և սպաններ քարկոծուեցին: Այս բերի երեւելիները միջամտելով հանդարտեցուցին են ամբողջը:

ՆՈՐ ՍՏՅՑՈՒՄՈՒ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանգէս Ամսթըս, Վիեննայի Միութեան Միարանութեան հայագիտական ուսումնարանի թիւ, որով զբաղուած էինք պատահաւոր սկիզբէն ի վեր, ուրախութեամբ ստացած ենք այժմ 1915 և 1916 թուականներինը տունն ձին հատորներով և 1917 և 1918 թուականներինը միացած հատորով մը:

Կատարեալով հետեւեալով տարապայման թանկացած լինելով ապուրկան ծախքերը, «Հանգէս» ի իրմբազրութիւնը ստիպուած քիչցուցեր է թերթին երեսները: Այս սակայն իր պարտականութեամբ միշտ հետաքրքրական կը մնայ հայ բանասերներին համար «Հանգէս» ի ընթերցողներ:

ցումը և ինչ չափով ալ լինի, թանգանահատելի է այն վերջին հատորին մէջ և Ազատութեան շարժումը ԺԵ ԺԶ դարու Հայոց մէջ վերնագրով լողաձներ կան որոնք մանաւանդ մեր ազգային ներկայ վիճակին մէջ մեծ հետաքրքրութեամբ կը կարդացին:

«Հանգէս» ի վերջին հատորի գինն է 8 ֆր. (15 մարք). 1915, 1916 և 1917. 18 միասին՝ 16 ֆր. 32 մարք) Հասցէն՝ Rédaction de la revue «Handes Amorya» VII, 2 Mechitaristengasse, 4, Vienne (Autriche).

P. S. Fremian. — ARMENOUNI Poèmes en prose. Venise. Imprimerie St. Lazare. 1919.

Հ. Ս. Երեմեան, որի թէ՛ հայերէն և թէ՛ ֆրանսերէն բանաստեղծութիւնները ծանօթ են արդէն, այս անգամ լոյս ընծայած է Armenouni բձակ բանաստեղծութիւնը, գեղեցիկ թուղթի վրայ տպագրուած և 21 երեսէ բաղկացած զրփոյկ մը: Արմէնուհին, Միհրանի որդին, որ կողքայ Հայաստանի կրած հարուածները թշնամիէն և ինք ալ վերջապէս զոհ կերթայ Մոլոթի վայրագութեան, իր գերեզմանի մէջէն ստուերատեսիլ կերկայ իր հօր և անոր քաջաբերական խօսքեր ուղղել յետոյ կը քաշուի կերթայ, յուսուոր հեռք մը թողով Արարատէն մինչև Զէյթուն:

(Գինն է 1 ֆր. վենետիկի մէջ):

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԱԶԳ

Կը ինդրուի Զմիռնացի Զովհաննէս Ա. ազգանուն, որ կը գտնուի Place des Grands Carmes, M. Paul cor donnier հանդիպել Արմէնիսի գրասենեակը, Զմիռնէն ստացուած նամակէ մը իրեն վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ հաղորդուելու համար:

ՃԱԿԱՏԱՐԱՐՏ

Օրաթերթ

Բաժնորդագիրն արտասահմանի համար՝ տարեկան 80 ֆր., վեցամսեայ 45 ֆր.: Հասցէն՝ «Djagatamart» Journal arménien, Rue Cabristan N. 37. Péra. Constantinople. (Poste militaire française)

ՎԵՐԱՆՈՒՆԴ

Շաբաթամերթ

«Վերանունդ»-ը որ սուկէ առաջ կը հրատարակուէր 2 շաբաթ մի անգամ, շաբաթամերթ եղած է այժմ: Նոր բաժնորդագիրն է 26 Թուի համար (1919 թուիս 16 — դեկտ. վերջ) 20 ֆրանկ:

Դրամ, նամակ եւ գրութիւններ ղրկել հիմնադիր-ստեղծիսն այս հասցէով. Dr. Léon Hampartoumian, D. D. S. 16, Boul. St. Denis. PARIS

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ ՔՍՐԴ ՓՈՍԴԱՆԵՐ

Խաղիտի Հայ Ուսանողական Միութիւնը գեղեցիկ գաղափարն ունեցած է հայ անուանի գործիչներին պատկերներով քարդ փողայներ հրապարակ հանելու սրազնի ժողովուրդը զանաք աւելի յաճախ իր աչքի և մտքի առջև ունենալ:

Հետեւեալ 13 քարդ փողայները կարելի է ստանալ նաև Արմէնիսի գրասենեակէն:

1. Արմէնիս (դերասան) — 2. Արմէնիս 2. Ղ. — 3. Արմէնիս Ա. — 4. Արմէնիս (գործարար) — 5. Արմէնիսի հայ գրագէտներ (Բաքի, Նալբանդեան, Պէշիքճաշեան, Գ. Արմէնիս, Արմէնիս, Խրիմեան, Գալաթ Բալիպա, Ս. Նալբանդեան, Խ. Արմէնիս, ամէնքը մէկտեղ մէկ քարդի վրայ) — 6. Գալաթեան (ընթերցանարար) — 7. Զօհրապ Գ. — 8. Խրիմեան Հայրիկ — 9. Կոմիտաս վրդապետ — 10. Նուպար Պողոս փաշա — 11. Պէշիքճաշեան — 12. Արմէնիս Թօ. — 13. Վարդապետ:

Մարտէլի մէջ հատը 20 անգամ Մարտէլէն դուրս 25 անգամ:

ԾԱՆՈՒ ԳԻՐԲԵՐ

Արմէնիս ի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ գիրքերը, որոնց արժեքները նշանակուած են իրենց առջև:

Մարտէլէն դուրս ղրկելու ճանապարհածախքը գնողին վրայ է. ուստի հաշուի գերութեան համար կը նշանակենք թէ՛ Մարտէլի մէջ ծախուելու գինները թէ՛ փոստով ուրիշ քաղաք ղրկուելու գինները: Այս վերջինները փակագծի մէջ գրուածներն են: Արմէնիս կանխիկ շտապած գիրք ղրկուելու: Արմէնիս (recommandé—registered) ծրարով ստանալու գողները պէտք է 25 ամիս մաքի ղրկուելու իւրաքանչիւր ծրարի համար որ 2 ֆր. օճեն աւելի պէտք չէ կուէ:

Խաղիտեանց. Կրթարան կամ Գերադանութիւն անգլիերէն լեզուի. 2 հատոր, Վէրի օճով, զորանական հրահանգներով որոնց Բաղդադին ալ կայ գործին վերջը: 2 հատորը 5 ֆր. 5. 5 1/2 ֆր.:

Վարդապետ Գաղղիական լեզուի. Ֆրանսերէն լեզուի համառօտ քերականութիւն մ'է, բայց իր խմբագրման վրայ բաւական ընդարձակ տեղեկութիւններով: Վերջը գրուած են ֆրանսերէն ընթերցանութեան ընթերցանութեան համար և ամենց վերաբերեալ ֆրանսահայ բառարան մը՝ ֆրանսերէն բառերի հնչուածով մէկտեղ: 2,30(2,50)

Եզովբոս. (Յոյն երեկի տաղանթի կենսագրութիւնը և իր 300է աւելի խմբատալի, զբօսընտրող և կրթող տաղանթները կը պարունակէ: Ամէն մէկ տաղանթի վրայ անոր բարձրական խմբագրուած է թէ՛ գրաբար և թէ՛ աշխարհաբար երկու տող ոտանաւորով, առակին տակն ալ աշխարհաբար գրուած խրատական բացատրութիւն մը և զբարար 8 տող ոտանաւոր: Առակները բացատրող բազմաթիւ պատկերներով զարդարուած է: Կը բաղկանայ 540 երեսներէ բաց ի պատկերներին յատկացուած երեսներէն: Ե տպգր. 8 ֆր. և 40 անգամ. (8,80)

ՏՆՈՒՆ—ԽՐԱԿԻՐ

Մ. ՓՈՐՓՈՌԻՆԻԱՆ

ՄԱՐՏԵՐԻ

Հայերէն Ֆալսաֆա Մ. Փոքրոգայեանի
Le Gérant: François CARRIERE.
Marseille. — Le p. imerie du M.